Հայտարարություն

ՀՀ կենտրոնական բանկի արժութային քաղաքականության վերաբերյալ

Կենտրոնական բանկը ՀՀ արժութային գործակալն է և լիազորված է իրականացնելու արժութային քաղաքականություն:

Կենտրոնական բանկի արժութային քաղաքականությունը նպատակաուղղված է արժութային պահուստների արդյունավետ կառավարման միջոցով ՀՀ դրամի հուսալիության և դրա նկատմամբ միջազգային վստահության ամրապնդմանը, արժութային գործառնությունների ազատականացմանը, օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ իրավատնտեսական դաշտի ձևավորմանը:

Արժութային քաղաքականության հիմնական սկզբունքները

Կենտրոնական բանկն իրականացնում է ազատ լողացող փոխարժեքների քաղաքականություն: Կենտրոնական բանկի միջամտությունը փոխարժեքների ձևավորմանը սահմանափակվում է անուղղակի ազդեցության գործիքներով:

ՀՀ տարածքում առաջարկվող ապրանքների, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների դիմաց միակ օրինական վճարամիջոցը ՀՀ դրամն է:

Կենտրոնական բանկը հայտարարում է դրամի ամենօրյա հաշվարկային փոխարժեքները՝ հիմք ընդունելով նախորդ օրը ներքին ֆինանսական շուկայում (միջբանկային սակարկություններ, միջբանկային արժութային շուկա, ներբանկային փոխարկումներ և փոխանակման կետեր) ձևավորված փոխարժեքների կշռված միջինը: Հաշվարկային փոխարժեքն օգտագործվում է հաշվապահական հաշվառման նպատակով և հիմք է հանդիսանում Կենտրոնական բանկի ընթացիկ գործառնությունների արտացոլման համար: Առք ու վաճառքի փոխարժեքները սահմանվում են հաշվարկային փոխարժեքների հիման վրա:

Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններն ամբողջապես ազատականացված են, ինչն ապահովում է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի լիարժեք մասնակցությունը ներքին արժութային շուկայի գործառնություններին: Վերացված են դրամով և արտարժույթով կանխիկ և անկանխիկ գործառնությունների իրականացման բոլոր սահմանափակումները:

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվում արտացոլվող գործառնությունները

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի շարժերի հետ կապված գործառնությունները իրականացվում են առանց ծավալային և այլ սահմանափակումների: Ներքին արժութային շուկայում ինչպես ՀՀ ռեզիդենտները, այնպես էլ ոչ ռեզիդենտները, անկախ իրավական կարգավիճակից, փոխհամաձայնեցված փոխարժեքներով կարող են փոխարկման գործառնություններ իրականացնել սպասարկող բանկերի միջոցով: ՀՀ ոչ ռեզիդենտ բանկերն իրավունք ունեն ներքին շուկայում ՀՀ դրամով արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնել

միջբանկային արժութային սակարկություններին մասնակցության, ինչպես նաև ուղղակի միջբանկային փոխարկումների իրականացման միջոցով:

Արժութային վերահսկողության իրականացումը

ՀՀ տարածքում գործող բանկերի, դրանց արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններն արտոնագրվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Նպատակ ունենալով ամրապնդել և ընդլայնել դրամի օգտագործման ոլորտը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ՀՀ տարածքում գործող բանկերի ընդհանուր կապիտալի նկատմամբ արտարժույթի տնօրինման սահմանաքանակ:

Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հաշիվները

Կենտրոնական բանկի կողմից վերացվել են ինչպես վճարային համակարգի հետ կապված, այնպես էլ ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից արժութային գործառնությունների սպասարկման ուղղությամբ կիրառվող բոլոր սահմանափակումները:

ՀՀ տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը, ինչպես նաև օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը կարող են սպասարկել միջազգային պրակտիկայում կիրառվող բոլոր տեսակի հաշիվներ: Նման ազատականացված սկզբունք է գործում նաև ռեզիդենտների կողմից օտարերկրյա բանկերում միջազգային բանկային պրակտիկայում կիրառվող հաշիվների բացման հարցում:

ՀՀ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների ընթացիկ արժութային գործառնություններից ստացված արժութային հասույթները լիովին տնօրինվում են իրենց կողմից:

Կապիտալի շարժերը

Արժութային արժեքները ՀՀ-ում կարող են լինել ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների սեփականությունը: Արժութային արժեքների սեփականության իրավունքը երաշխավորվում և պաշտպանվում է պետության կողմից:

ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն առանց սահմանափակումների արժութային արժեքներ փոխադրել, առաքել և ներմուծել ՀՀ: Օրենսդրությամբ ոչ ռեզիդենտների համար սահմանված է նաև կապիտալի ներհոսք ապահովող արտոնյալ կարգաձև՝ ընդհուպ բոլոր երաշխիքների ապահովումը՝ ՀՀ ներմուծված գումարների, գույքի և այլ միջոցների, ինչպես նաև ստացված շահույթի անկորուստ արտահանման համար:

Կենտրոնական բանկը նպատակ ունի ըստ ամենայնի զարգացնելու կապիտալի շարժերի հետ կապված գործընթացների հետագա ազատականացման խնդիրը:

Արժութային քաղաքականության զարգացումը

Հաշվի առնելով փոխարժեքների սահմանման միջազգային փորձը՝ Կենտրոնական բանկը հակված է վերանայելու փոխարժեքների ձևավորման գործող կարգը՝ բանկերի հետ համատեղ ապահովելով այլ ֆինանսավարկային կազմակերպությունների մասնակցությունը ֆինանսական շուկայի գործառնություններին և առաջնորդվելով հետևյալ սկզբունքներով.

1. Ֆինանսական շուկայում ձևավորված առաջարկի և պահանջարկի իրական հարաբերակցության հիման վրա սահմանել արտարժույթի առք ու վաճառքի փոխարժեքները և վերջիններիս հիման վրա հաշվարկել հաշվարկային փոխարժեքները:
2. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կամ վերջինիս գործունեության ոլորտի հետ կապված այլ գերատեսչությունների կողմից արտոնագրված և պետական ռեգիստրում գրանցված ֆինանսավարկային կազմակերպություններին թույլատրել իրականացնել արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ:
3. Ընդլայնել ոչ բանկային ֆինանսական միջնորդների (դիլերների և բրոքերների) մասնակցությունն արժութային շուկայում՝ արտոնագրված ֆինանսական դիլերներին հնարավորություն ընձեռելով առանց բանկերի միջամտության իրականացնել արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ՝ գործող օրենսդրության և Կենտրոնական բանկի սահմանած նորմատիվային դաշտի սահմաններում: Ելնելով իրենց տնտեսական շահերից՝ հաշվապահական և վիճակագրական նպատակների համար վերջիններիս թույլատրել օգտագործել իրենց կողմից իրականացված գործառնությունների ընթացքում ձևավորված առք ու վաճառքի փոխարժեքների կշռված միջինը կամ ԿԲ հաշվարկային փոխարժեքները: Տնտեսավարող սուբյեկտներին իրենց գործունեության հետ կապված հաշվարկներն իրականացնելիս թույլատրել հիմք ընդունելու սպասարկող ֆինանսավարկային կազմակերպության կամ Կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքները, քանի որ նրանք չեն իրականացնում ֆինանսական միջնորդի ֆունկցիաներ:
4. Վերացնել օրինական ճանապարհով ձեռք բերված կանխիկ արտարժույթի արտահանման հետ կապված բոլոր սահմանափակումները:
5. Ազատականացնել թանկարժեք քարերի և մետաղների, թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներով գործառնությունները՝ ապահովելով տնտեսավարող սուբյեկտների մասնակցությունը շուկայի գործառնություններին: